

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ #34, 2009-02-27

Տեսակետ

ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՉՊԵՏՔ Է ՀԱԿԱՍԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆԸ



Օգոստոսի 11-ը Ազգային ինքնության տոն հռչակելու եւ օգոստոսի 6-11-ը որպէս Նավասարդյան խաղեր կատարելու Ազգային ժողովի առաջին ընթերցումն անցած որոշումը, կարծում ենք, վիճելի, չհիմնավորված եւ անգամ անընդունելի է, որովհետեւ այն որեւէ ձեւով չի հիմնավորվում ո՛չ անցյալի ավանդույթով, ո՛չ իր պարունակած բովանդակությամբ ու խորհրդով եւ ո՛չ էլ տումարական հաշվումներով:

Ավելին, այն լուրջ հակասություն է ստեղծում ազգային-եկեղեցական Տոնացույցի, ինչպէս նաեւ օգոստոսի առաջին կեսին վերաբերող ժողովրդական արմատացած եւ սերտորեն իրար միահյուսված մի շարք սովորությունների եւ արարողությունների հետ:

Այս նախաձեռնության հեղինակները, մատնանշելով այն հանգամանքը, որ Նավասարդի 1-ը եղել է հայոց տարվա սկիզբը, որն ազգային ավանդությամբ կապվում է Հայկ Նահապետի՝ Բելի դեմ տարած հաղթանակի հետ, եւ որ համաձայն Ալիշանի տումարական հաշվարկների, Նավասարդի 1-ը համընկել է օգոստոսի 11-ին, եւ այն էլ իր հերթին ուղեկցվել է մոտ մեկշաբաթյա Նավասարդյան խաղերով եւ տոնախմբություններով, առաջարկում են ի հիշատակ Հայկ Նահապետի տարած հաղթանակի օգոստոսի տասնմեկը տոնել որպէս Ազգային ինքնության տոն վերականգնելով եւ Նավասարդյան խաղերի տոնակատարությունները:

Առաջին հայացքից բավական ոգեւորիչ թվացող նման տոնը, սակայն, հիմնավորված չէ հետեւյալ պատճառներով. նախ տումարական-օրացուցային առումով, որովհետեւ Նավասարդի մեկը տարբեր դարաշրջաններում տարբեր ամիսների հետ է կապվել եւ ինչպէս բավական համոզիչ ձեւով ցույց է տալիս Գրիգոր Բրուսյանը «Օրացույց Հայոց» մեծարժեք ուսումնասիրության մեջ, Հին հայոց Նավասարդը տոնվել է հունիսի 14-ին, եւ նրան նախորդող Համբարձման ու հաջորդող Վարդավառի տոների ժողովրդական արարողությունները Նավասարդյան տոների հիշողությունն են կրում իրենց մեջ:

Երկրորդ՝ որեւէ տոն հաստատելիս այն չպետք է գա եւ հակասության մեջ մտնի արդեն ընդհանրացած տոնի հետ, իսկ ինչպէս գիտենք, թե՛ Հայոց եկեղեցում, թե՛ քրիստոնեական բոլոր եկեղեցիներում օգոստոսի 12-ից 18-ի միջեւ ընկած կիրակին տոնում են Տիրամոր Վերափոխման տոնը, նրան նախորդող շաբաթապահքով: Վերափոխումը կամ ինչպէս ժողովուրդն է ասում՝ Աստվածածնի տոնը Տիրամորը նվիրված գլխավոր տոնն է, որն ավանդաբար ուղեկցվում է նաեւ ժողովրդական տոնախմբություններով եւ ուխտագնացություններով: Այս հանգամանքը, պայմանավորված քրիստոնեական եկեղեցում Տիրամոր իր Միածին Որդու առջեւ գլխավոր բարեխոսը լինելով, միաժամանակ բացատրվում է եւ այն պատճառով, որ նախաքրիստոնեական շրջանում հայերը, հույները, հռոմեացիները եւ տարբեր ժողովուրդներ նույն այս օրը կատարում էին Մայր Աստվածուհու տոնը, ինչպէս հայերը՝ ոսկեմայր Անահիտի, եւ քրիստոնեության ընդունումից հետո Մայր Աստվածուհուն փոխարինեց Աստվածամայրը՝ հոգեւոր մի նոր վերաիմաստավորմամբ ու անապական փայլով իրենում շարունակելով հնօրյա ավանդույթը: Ուստի, հայ ժողովրդի քրիստոնեական եւ նախաքրիստոնեական շրջանների ամենանվիրական եւ պայծառ տոներից մեկի վրա Ազգային ինքնության տոնի կարգումը այնքան էլ խելամիտ չէ:

Ավելին, Նավասարդյան օրերը ոչ միայն հակասության մեջ են մտնում Տիրամոր Վերափոխման տոնի հետ, այլեւ Նավասարդի մեկը տումարական անշարժ դրությամբ օգոստոսի 11-ին կատարելը նշանակում է անտեսել եւ հաշվի չառնել հայ ժողովրդի ազգային-եկեղեցական մեծագույն եւ ամենանվիրական տոներից մեկը՝ Սուրբ Էջմիածնի տոնը: Հայոց եկեղեցական օրացույցով Ս. Էջմիածնի տոնը նշվում է Տիրամոր Վերափոխման տոնին նախորդող շաբաթ օրը: Քանի որ Վերափոխումը նշվում է օգոստոսի 12-18-ի ընթացքում, ուստի, Ս. Էջմիածնի տոնն էլ, ըստ տվյալ տարվա օրացույցի, կարող է կատարվել օգոստոսի 11-17-ի ընթացքում, եւ այն տարիներին, երբ օգոստոսի 11-ը շաբաթ կլինի, փաստորեն կհամընկնի Ազգային ինքնության ներկայացվող տոնի հետ:

Պատմությունից, այդ թվում եւ քրիստոնեության, հայտնի է, որ որեւէ տոնի վրա տոն է սահմանվում հին տոնը մոռացության տալու կամ նոր ուսմունքի մեջ ներառելով այն՝ արդեն որպէս մի նոր տոն կատարելու համար, ինչպէս որ քրիստոնեությունը հեթանոսական մի շարք տոների վրա կարգեց

Եկեղեցական տարբեր տոներ:



Ս. Էջմիածնի տոնի օրը Ազգային ինքնության օր հռչակելով եւ այն կապելով Հայկ Նահապետի հետ՝ մենք ո՞ւր ենք գնում՝ առաջ, թե՛ հետ:

Երբորդ՝ ժողովուրդների նահապետները հիշեցնում են հերոսական նախնիներին, ինչպես որ հին հույներն ունեին հերոսական նախնիների տոն եւ առանձնակի մի պաշտամունք: Նահապետների հիշատակը, սակայն, որպես սկիզբ, որպես տվյալ ժողովրդի պատմության սկզբնավորման ելակետ դեռեւս չի կարող ներկայացնել նրա հետագա ընթացքը եւ անցած ճանապարհի ուղենշային կետերը. այնպես որ աշխարհայացքային առումով եւս Հայկ Նահապետի տարած հաղթանակի օրը, կարծում ենք, չի կարելի դիտարկել որպես Ազգային ինքնության օր:

Մեր ասածը մի փոքր ավելի համոզիչ դարձնելու համար թերթային հոդվածի շրջանակում փորձենք ներկայացնել, թե որն է Հայկա շրջանը եւ այն ինչպես է կապվում Նավասարդյան տոների հետ եւ թե ինչ բնորոշ հատկանիշներ ունի այս տոնը:

Նախ, անհրաժեշտ է նշել, որ Նավասարդյան տոների ամբողջական նկարագրություն չի պահպանվել, եւ այն վերականգնվում է մեր պատմիչների հաղորդած տարբեր տեղեկությունների, միջնադարյան տարբեր քարոզների եւ մեկնությունների, ինչպես նաեւ տոմարական տարբեր հաշվումների եւ նրանցում հայոց առաջին ամսանունի՝ Նավասարդի մասին եղած հիշատակություններով:

Այս ամենը հավաքել եւ որոշակի համակարգվածությամբ ներկայացրել է Ղեւոնդ Ալիշանը «Հուշիկը հայրենյաց Հայոց» երկհատոր գործի «Հայկա շրջան» եւ «Տոնք Նավասարդի» գլուխներում:

Ելնելով այն հանգամանքից, որ տարբեր ժողովուրդների ամսանունների զուգադրմամբ կազմված մի շարք ժողովածուներում հայոց Նավասարդի առաջին օրվա դիմաց նշված է օգոստոսի 11-ը՝ վերջինս Ալիշանը ընդունում է որպես հայոց տոմարի սկիզբ: Հիմնվելով մատենագրական այն վկայության վրա, թե 428 թվականին Նավասարդի առաջին օրը եղել է օգոստոսի 11-ին, Ալիշանը ասում է, որ այդ թվականին լրացել է տոմարական մի շրջան, որը Հին աշխարհում կազմված էր 1460 տարուց, եւ հայկական շարժական տոմարով 1460 տարվա ընթացքում Նավասարդի մեկը նշվել է հուլիսի 11-ից գալով մինչեւ օգոստոսի 11-ը, որը, ըստ Ալիշանի, Նավասարդի մեկի հնարավոր վերջին ժամանակային կետն է, որից

հետո Նավասարդի մեկը դարձյալ վերադառնում է սկսվում է հուլիսի 11-ից: Ալիշանը նշում է, որ ազգերի տոմարներն իրենց սկզբնավորման տարեթվով, ամսով եւ ամսաթվով կապվում են կա՛մ տեղի ունեցած նշանավոր դրեւէ իրադարձության հետ եւ կա՛մ էլ արեգակի՝ երկնքում գրաված նշանակալի մի դիրքի հետ: Ըստ Ալիշանի՝ օգոստոսի 11-ին Արեգակը նման նշանակալից դիրք չունի եւ այս օրը որպէս հայոց Նոր տարի նշելը կապվում է Հայկ Նահապետի՝ Բելին հաղթելու օրվա հիշատակի հետ: Ասածը հիմնավորելու համար նա 428 թվականից, երբ ավարտվել էր տոմարական մի շրջանը, հանում է երկու այդպիսի 1460 տարուց բաղկացած շրջան եւ ստացված 2492թ. Քրիստոսի ծննդից առաջ համարում է հայկական թվականության, իսկ օգոստոսի 11-ը՝ տոմարի սկիզբ: Ինչպէս Ալիշանն է գրում, Մովսէս Խորենացու Պատմության եւ հարեւան ժողովուրդների պատմության ժամանակագրության համադրմամբ, Քրիստոսի ծննդից առաջ 2492թ. օգոստոսի 11-ին Հայկ Նահապետը հաղթեց Բելին:

Ըստ այդմ, Ալիշանը օգոստոսի 11-ը անվանում է «ազգային գերագույն տոն», եւ գրում, որ մեր պատմիչները «Հայկա գործոց մեջ դյուցազնական քաջութենէ վեր բան մը ալ կու դիտեն, կրոնական դիմադրություն մը, ազատություն մը ի բռնութենէ առաջին կռապաշտին, կամ անոր, որ Աստծո վայելած պատիվը եւ պաշտոնն իր անձին կու սեփականեր: Ասոր համար այս տոնական օրս եւ հանդեսս պետք է մեզի կրկնապատիկ եւ սիրելի ըլլա»:

Նավասարդյան տոնի եւ խաղերին բնորոշ հատկանիշները Ալիշանը առկա մատենագրական տվյալների հիման վրա ներկայացնում է հետեւյալ վեց կետերով, որոնցից, ինչպէս կտեսնենք, այս տոնը իրապէս կապվել է ոչ թէ ազգային ինքնության գաղափարի, այլ հերոսական նախնիների պաշտամունքի հետ եւ խաղերի բնույթն էլ տիպաբանական հատկանիշներով սերտորեն առնչվում է Վարդավառի հետ, ուստի, եթէ նման տոն տոնվի, ապա այն պետք է կատարել Վարդավառին եւ ոչ թէ օգոստոսի 11-ին:

Այժմ ներկայացնենք Ալիշանի թվարկած վեց կետերը.

Առաջին՝ Նավասարդ բառը կազմված է Նավա՝ նոր եւ սարդ՝ տարի հնդեվրոպական նախահիմք ունեցող արմատներից: Ալիշանը, շեշտելով այս բառի եւ տոնի խոր հնությունը, այն հասցնում է մինչեւ ջրհեղեղյան ժամանակները՝ գրելով, որ Նավասարդ անվանումը եւ նրա սկզբնավորումը «անգամ մթության ամպոց մեջ ծածկված է», որոնք մինչեւ Նոյի ժամանակներն էլ են հասնում:

Երկրորդ՝ «Նավասարդի օրերը կըլլային պեսպես ջրախաղք, իբրեւ տոնք ջրոց կամ հիշատակ ջրհեղեղին»:

Այսպիսով, Ալիշանը հստակորեն նշում է, որ Նավասարդը այժմ կապվում է Վարդավառի տոնի հետ: Այդ կապը առավել հստակ է երեւում Նավասարդ ամսանունին տրված՝ Անանիա Շիրակացու, Վանական վարդապետի եւ Գրիգոր Տաթևացու այն բացատրությունից, որ Նավասարդը Հայկ Նահապետի զավակն էր, եւ որ Նավասարդ անունը բխում է նավ բառից, թէ Նավասարդ ամսին, այսինքն՝ ամառային շրջանում, նավարկելու համար ամենահարմար եղանակն է:

Երրորդ՝ Նավասարդը տոնն էր եւ «Ամանորայ ամենաբեր դից», այսինքն՝ բերքի ընծայման տոնն էր: Նավասարդին բնորոշ այս հատկանիշը պահպանվել է կատարվում է Տիրամոր Վերափոխման տոնին՝ Խաղողօրհների արարողությամբ:

Չորրորդ՝ Նավասարդյան տոներին հանդիսություններ էին կատարվում ի հիշատակ Մաժան Քրմապետի: Խորենացին այս մասին գրում է. «Հայոց թագավոր Տիգրան վերջինը պատվել է իր եղբոր՝ Մաժան քրմապետի գերեզմանը Բագավանում, Բագրեւանդ զավառում, գերեզմանի վրա բազին շինելով, որպէսզի այդտեղի գոհերից վայելեն բոլոր անցորդները եւ հյուրեր ընդունվեն զիշերելու համար: Հետո Վաղարշն այդ տեղում ժողովրդական տոն սահմանեց նոր տարվա սկզբին, Նավասարդի ամսազլխին»:

Այս տեղեկությունը եւս վկայում է, որ Նավասարդյան տոնը հիշատակի տոն էր: Ինչպէս մեր մյուս պատմիչներն են գրում, այն կատարվում էր աշխարհախումբ հանդիսությամբ, այսինքն՝ այդ տոնին Բագրեւանդի զավառում էին խմբվում Հայոց արքան, քրմաց դասը, հայոց ավագանին, զորքը եւ ժողովրդյան խումերամ բազմությունը: Քրիստոնեության ընդունումից հետո աշխարհախումբ այս հանդիսություններին քրմաց դասի փոխարեն արդեն Հայոց հայրապետն էր մասնակցում՝ եկեղեցական դասի հետ:

Հինգերորդ՝ Նավասարդի հետ է կապվում եւ Արտաշէս թագավորի որդու՝ Արտավազդի՝ Մասիսի վիճում քաջերի կողմից բանտվելու պատմությունը:

Արտավազդը մեր մատենագրության մեջ եւ ժողովրդական հավատալիքներում երկակի ընկալում է ունեցել: Մի կողմից, որ նա պետք է գա եւ ավերի աշխարհը, եւ որ հակառակը՝ նա պետք է գա եւ փրկի մարդկությանը: Վերջին մեկնաբանությամբ նա նույնանում է բանտվածի, շղթայված մասին առասպելներին, ինչպէս Փոքր Մհերի եւ Պրոմէթէոսի մասին պատմություններն են:

Այստեղ եւս առկա է հերոսական ազատարար նախնու մասին պատմությունը:

Եվ վերջապէս վեցերորդ՝ ինչպէս արդեն ասացինք, Նավասարդը կապվում է Հայկ Նահապետի

հիշատակի հետ:

Հուշիկների՝ Նավասարդյան տոներին նվիրված գլխի վերջում, որպես ամփոփում, Ալիշանը գրում է. «Չկա ազգ մը, որ այսչափ ստույգ, հին եւ այսչափ պանծալի հիշատակ մը ունենա, վասն որո կրնանք անվանել զսա բուն Օր հայկական եւ Տոն ազգային»:

Ալիշանը, սակայն, ինքը, հայոց Նավասարդի 1-ը համարելով օգոստոսի 11-ը, այն հստակորեն վերապահում է Տիրամոր տոնին եւ նրան նախորդող Ս. Էջմիածնի տոնին: Այսինքն՝ երազելով վերստին տոնված տեսնել Նավասարդյան տոները եւ Հայկի հիշատակը՝ անպատկերացնելի է համարում այն օգոստոսի 11-ին կատարելը եւ օգոստոսի 11-ը հաշվելով նոր տոմարով՝ Նավասարդի տոնը ներկայացնում է օգոստոսի 23-ի ներքո՝ այդ օրվա հետ կապելով ազգային վերածնությունը, եւ հատկանշական է, որ Հայաստանի Երրորդ Հանրապետության Անկախության հռչակագիրը ընդունվեց հենց օգոստոսի 23-ին:

Քանի որ այս տոնը ընդունելու առաջարկները, ըստ էության, խարսխված են Ալիշանի առաջ քաշած տեսության վրա, ուստի եթե նրան հետեւենք, ապա այդ տոնը պետք է անվանվի Հայկի տոն եւ կատարվի օգոստոսի 23-ին:

Նաեւ, ինչպէս նշեցինք, Նավասարդյան տոները իրենց բնորոշ հատկանիշներով նույնանում են Վարդավառի տոնի հետ, ուստի կարելի է այն տոնել Վարդավառին եւ անվանել Հերոսական նախնիների տոն:

Ազգային ժողովը, հետեւաբար, եթե որոշել է նման տոն սահմանել, ամեն դեպքում պետք է հստակ լինի, որ այն չի կարող տոնվել օգոստոսի 11-ին եւ չի կարող անվանվել Ազգային ինքնության օր: Կարծում ենք՝ ամենախելամիտը Ալիշանի առաջարկն է՝ օգոստոսի 23-ին եւ որպէս Հայկի տարած հաղթանակի հիշատակի օր, իսկ որպէս Ազգային ինքնության տոն նշել Թարգմանչաց տոնը՝ հետեւյալ պատճառներով: Նախ, որովհետեւ հինգերորդ դարը՝ որպէս Հայոց Ոսկեդար, այն բարձրակետն է, որի կնիքն է կրում հայության հետագա ողջ ընթացքը: Սահակ-Մեսրոպյան սխրանքով հայ ժողովուրդը թե՛ ազգային-հոգեւոր միասնության հասավ, բաժանված լինելով Բյուզանդիայի եւ Պարսկաստանի միջեւ, եւ թե՛ Հայոց Այբուբենով ու Թարգմանչաց շարժմամբ ստացավ հզոր այն լիցքն ու զենքը, որով հենց պահեց իր ազգային ինքնությունը հաջորդող ալեկոծ դարերի ընթացքում: Երրորդ՝ այս տոնը ունի ձեւավորված իր ավանդույթը եւ հոկտեմբերին ավանդաբար նշվում է թե՛ Հայաստանում եւ թե՛ սփյուռքում հայության բոլոր հատվածների կողմից՝ Վարդանանց տոնի հետ միասին դառնալով հայապահպանության, որով եւ՝ ազգային ինքնության պահպանության կարեւորագույն գործոններից մեկը:

Կարելի է այլ տարբերակներ եւս նշել, սակայն ասվածն ու չասվածը գալիս են վկայելու, որ առանց հարցը խորապէս քննելու, նրա պատմամշակութային եւ ազգային-հոգեւոր շերտերը վեր հանելու նման տոնի ընդունումը կդառնա հակադրությունը այն նպատակի, որի համար պետք է ընդունվի, ուստի կարծում ենք, որ այս հարցը առայժմ պետք է հանել Ազգային ժողովի նիստերի օրակարգից եւ վերստին անդրադառնալ դրան մասնագիտական եւ ազգային-հասարակական համալիր խոր քննարկումներից հետո:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ, Բանասիրական գիտությունների թեկնածու

*Նկար 1. Ջուլիանո Չաստ. «Հայկի եւ Բելի ճակատամարտը»*

*Նկար 2. Հայկ Նահապետ*

<http://www.azg.am/AM/2009022722>

© AZG Daily, 2008